ԱՐՄԱՎԻՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԼԵՎՈՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Ռուսահայ գաղթավայրերի պատմության մեջ իր ուրույն և ուշագրավ տեղն ունի Արմավիրը։ Այն հիմնադրվում էր այնպիսի ժամանակաշրջանում, երբ արդեն գոյություն ունեցող ռուսահայ գաղթավայրերն սստիճանաբար զրկվում էին ունեցած արտոնություններից, կորցնում իրենց դատա-վարչական ինքնավարությունը և հավասարեցվում համառուսական պետական և դատական իրավակարգին։

Չերքեզահայերի և, հիմնականում, Արմավիրի պատմությունը մանրամասն գրի է առել Ֆ. Շչերբինան, օգտագործելով Արմավիրի դյուղական վարչության արխիվային նյութերը[1]։ Այսօր, երբ նշված արխիվից գրեթե ոչ մի փաստաթուղթ չի պահպանվել, Ֆ. Շչերբինայի աշխատությունը, փաստորեն, այդ նյութերը պատճենող միակ նմուշն է։

Արմավիրի և հատկապես չերքեզահայերի պատմության ուսումնասիրման առումով հետաքրքիր է նաև վաստակաշատ բանասեր-պատմաբան Ե. Շահազիզի «Չերքեզիա կամ Չերքեզիստան և Չերքեզահայք» անտիպ աշխատությունը[2]։ Ե. Շահազիզը օգտվել է Ֆ. Շչերբինայի աշխատությունից։ Նրան բազմապիսի թվական ու փաստական տվյալներ են հաղորդել նաև արմավիրահայերը։

Չերքեզահայերի և Արմավիրի պատմությանն անդրադարձել են նաև Հ. Խոսրովյանցը[3], ռուսական բանակի սպա Ի. Իվանովը[4], Ռ. Բեգ-Երզնկյանը[5], ռուսական բանակի գնդապետ Կ. Ստալը[6], Պ. Բուտկովը[7], Ս. Ջալալյանցը[8], Լեոն[9], Շահան-Սիմոնը[10] և ուրիշներ։

Սովետահայ պատմագրության մեջ այդ հարցի շուրջ առանձին հոդված-

---

1 Ф. А. Щербина, История Армавира и черкесо-гаев, Екатеринодар. 1916. *Ֆ. Շչերբինան չերքեզահայերին անդրադարձել է նաև* «История Кубанского Казачьего Войска» *երկհատոր աշխատությունում (Եկատերինոդար, 1913)։*

2 *Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի (այսուհետև՝ ԳԱԹ) արխիվ, «Չերքեզիա կամ Չերքեզիստան և Չերքեզահայք» (ց. 1, բ. I, գ. № 10)։*

3 *Մատենադարան, ձեռ. №№ 9621, 1792, 4597։*

4 И. Иванов, Армавир («Кавказ», 1850, № 45, 46); его же, Армавирские армяне («Ставропольские губернские ведомости», 1853, № 14, 1855, № 5—12).

5 *ԳԱԹ, հավաքածու, պատմական մաս, գ. 8, Ռ. Բեգ-Երզնկյան, Չերքեզահայք (անտիպ)։*

6 «Этнографический очерк черкесского народа». Составил ген-штаба подполковник Сталь в 1852 г. («Кавказский сборник», т. 21, Тифлис, 1900, стр. 79).

7 П. Г. Бутков, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., СПб., 1869, ч. II, стр. 169, 230.

8 *Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 453—456։*

9 *Լեո, Հովսեփ կաթողիկոս Արղության, Թիֆլիս, 1902, էջ 207—209։*

10 *Շահան-Սիմոն, Արմավիրի քառաձայն երգեցիկ խմբի հուշարձանը, Թիֆլիս, 1914։*

ներով հանդես է եկել Խ. Փորքշեյանը, հիմնականում անդրադառնալով հայերի՝ Չերքեզիա կատարած գաղթի տարեթվի որոշմանը, շոշափելով նաև գաղութի հիմնադրմանը վերաբերող մի շարք հարցեր[11]։

Մեր երկրի արխիվներում պահվում են բազմաթիվ նյութեր, որոնք հնարավորություն են ընձեռում Արմավիրի պատմության հարցերի բազմակողմանի ուսումնասիրման համար։

Ուսումնասիրողները դեռևս միասնական կարծիքի չեն հայերի՝ Արևմտյան Կովկասում բնակվելու ժամանակի հարցում։ Ըստ Ի. Իվանովի, հայերը գաղթել են Ղրիմից և Արևմտյան Կովկասում վերաբնակվել XVII դ. կեսերին[12]։ Աննշան չափով են տարբերվում Խոսրովյանցի, Ս. Ջալալյանցի և Ռ. Բեգ-Երզնկյանի կարծիքները հայերի՝ Չերքեզիա կատարած գաղթի վերաբերյալ։ Ռ. Բեգ-Երզնկյանը ընդհանրացրել է նախորդների կարծիքները, նշելով, որ «նախնիք Չերքեզահայոց երեք հարիւր ամօք առաջ (այսինքն, XVI դ.—Լ. Պ.) եկան, որ էալք ի զանազան տեղեաց ի Ղրիմայ յԱնի քաղաքի գաղթականաց, յԱնատոլիայ ի Հայաստանէ և ի Վրաստանէ և տոհմական անունակոչութիւնք նոցա բացահայտ ցուցանեն թե ո՞յք և յո՞ր ազգատոհմէ հատուածեալ յառանձին ժամանակս, տիպեալք ի զանազան ապաբաղտութիւնից իբրև վերջին ապաստարան մուտ գործեցին ի մէջ լեռնականս...»[13]։

Ֆ. Շչերբինան գտնում է, որ հայերի գաղթը Չերքեզիա տեղի է ունեցել Հայաստանից՝ XIV դ. վերջին[14], իսկ ըստ Ե. Շահազիզի՝ «չերքեզահայության առաջին և հնագույն զանգվածը բուն Հայաստանից դուրս եկած և Չերքեզիայի լեռները հասած և այդտեղ բնակություն հաստատած մի առանձին, անկախ գաղթականություն չի եղել, այլ Ղրիմի մի փոքրիկ հատվածը, հետագայում արդեն Ղրիմից եկած և այդտեղ հաստատված»[15]։

Խ. Փորքշեյանը հենվելով Չերքեզիայում պեղված և հայերին վերագրվող մի քանի հուշարձանների և պատահական գտածոների վրա, եզրակացրել է, որ չերքեզահայերն ընդհանուր տարագրության բեկորներն են, որոնք X—XI դդ. բնակություն են հաստատել Թամանի թերակղզում և Հյուսիսային Կովկասի լեռնային շրջաններում[16]։

Իսկ ի՞նչ են գրում գաղթի մասին իրենք՝ չերքեզահայերը։ Արմավիրահայերի խնդրագրերից մեկում ասվում է. «...դեռևս 16-րդ դարի վերջին մեր նախնիները դուրս են եկել Ղրիմից և բնակվել լեռնցի տարբեր ցեղերի շրջանում...»[17]։ Մեկ այլ վավերագրում նշվում է, որ չերքեզահայերի նախնիներն ինչ-որ ժամանակ ապրել են պարսկական տիրույթներում, այնուհետև վերաբնակվել են Ղրիմի թերակղզում, իսկ հետո թողնելով Ղրիմը, անցել են Հյուսիսային Կովկասի լեռները՝ առևտրով զբաղվելու նպատակով[18]։ Տարեց

---

11 Խ. Ա. Փորքշեյան, Երբ և որտեղից են հայերը գաղթել Չերքեզիա («Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3)։ Х. А. Поркшеян, Происхождение черкесогаев и основание города Армавира (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 5)։

12 И. Иванов, Армавир («Кавказ», 1850, № 45).

13 Ռ. Բեգ-Երզնկյան, նշվ. աշխ., էջ 93։

14 Ф. А. Щербина, История Армавира и черкесо-гаев, стр. 177.

15 Ե. Շահազիզ, նշվ. աշխ., էջ 7։

16 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 5, էջ 75։

17 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 185, վավ. 78։

18 Государственный архив Краснодарского Края (в дальнейшем ГАКК), ф. 774, оп. 1, д. 216, л. 205—206.

չերքեզահայերի վկայությամբ «հայերը չերքեզների մեջ մտել են ԺԵ դարու մեջ։ 1475 թ. երբ օսմանցիք տիրանում են Խրիմին և սկսում անխնա կոտորել, հայ մեծամեծները իրենց հետ տանելով ստվար խմբեր, գաղթում են Մոլդավիա և Լեհաստան, ահա այս ժամանակներում է, որ հայերը Ղրիմից ջոկ-ջոկ ժամանակները քիչ-քիչ դուրս գալով մտել են չերքեզների մեջ, ուր դեռ իսլամը անծանոթ էր չերքեզներին»[19]։ Փաստորեն չերքեզահայերն իրենց համարում են Ղրիմից գաղթածներ կամ ինչպես սիրում էին արտահայտվել՝ նոր նախիջևանցիների արյունակիցներ, որոնց հետ Ղրիմում ժամանակին ապրել են իրենց նախնիները։ Գաղթի ժամանակի հարցում տարբեր տարբերվերի, անդամ դարերի հիշատակությունը հավանաբար առաջ է եկել այն պատճառով, որ հայերի բնակեցումը չերքեզաբնակ վայրերում տարբեր ժամանակներում կատարված գաղթի և աստիճանական վերաբնակության արդյունք է։ Այդ է վկայում և այն փաստը, որ հայ ընտանիքները ցրված են ապրել չերքեզական առվներում[20]։ XIX դ. սկզբի մի զինվորական զեկուցագրի համաձայն՝ «լեռներում չկար մի գյուղ, որտեղ չապրեին մի քանի հայ ընտանիքներ»[21]։

Չերքեզիայում հայերը չերքեզ ազնվականներին՝ ուղղեններին, հավասար արտոնություններ և իրավունքներ են ունեցել։ Իսկ ի՞նչը ստիպեց հայերին լքել իրենց վաղեմի բնակատեղիները Չերքեզիայում, հրաժարվել արտոնություններից (այդ թվում և ճորտեր ունենալու իրավունքից) և գաղթել ռուսական սահմանները։ Կիսաքրիստոնյա և կիսահեթանոս չերքեզական ցեղերը, որոնց մեջ ապրում էին հայերը, XVIII դ. սկզբներից թուրքական սուլթանի հրամանով Կովկաս ժամանած մահմեդական քարոզիչների դրդմամբ աստիճանաբար մահմեդականություն են ընդունում։ XVIII դ. վերջին լեռնցիների մեջ հայտնվում է Շեյխ-Մանսուրը՝ մահմեդականության տարածման պատրվակով լեռնական ժողովուրդներին Ռուսաստանի դեմ հանելու նպատակով[22]։

XIX դ. առաջին կեսի Կովկասի քաղաքական կյանքին լավատեղյակ հայազգի ծովակալ Լ. Սերեբրյակովի վկայությամբ, լեռնցի ժողովուրդների մոտ հայրենիքի հանդեպ տածած սիրուն ավելանում է մեկ այլ, Արևելքում առավել ուժեղ՝ հավատը պաշտպանելու զգացմունքը[23]։

Ռուսների առաջխաղացումը դեպի Կովկաս կանխելու գործում չերքեզները հարմար և ամուր պատնեշ էին Թուրքիայի համար։ XVIII դ. վերջերից Արևմտյան Կովկասի նվաճման համար մղվող պայքարում չերքեզական ցեղերի կրոնական մոլեռանդության հետևանքով չերքեզահայերի համար ծանր կացություն է ստեղծվում։ Ն. Աշտարակեցուն ուղղված նամակներից մեկում Լ. Սերեբրյակովը գրում է, որ մահմեդական ցեղերի շրջանում ապրող և քրիստոնեական հավատը դավանող հայերը դրկված են եկեղեցական արարողություններ

---

19 ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 57, ց. 1, գ. 337, թ. 4։

20 Центральный государственный исторический архив СССР (в дальнейшем ЦГИА СССР), ф. 1090, оп. 1, д. 133, л. 1.

21 «Акты Кавказской археографической комиссии» (в дальнейшем АКАК). т. 6. ч. 11, стр. 451.

22 Н. Данилевский. Кавказ и его горские жители в нынешнем положении. 1846, стр. 118.

23 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, № 1, էջ 50։

կատարելու հնարավորությունից, իսկ նրանց մի մասը ոչ մի կրոն չի դավանում[24]։

Հայերը լավ էին գիտակցում այն տնտեսական առավելությունները, որ սպասում էին նրանց ռուսական սահմանները տեղափոխվելու դեպքում։ Նրանց պատկերացման մեջ վառ էր մի շարք արտոնություններից օգտվող իրենց հայրենակիցների՝ նոր նախիջևանցիների, օրինակը։ Վերջիններիս հետ չերքեզահայերը շփվում էին առևտրական գործարքների ժամանակ։ Արևմտյան Կովկասի նվաճման համար մղվող պայքարում չերքեզահայերի համակրանքն ակնհայտորեն ռուսների կողմն է եղել։ XIX դ. սկզբի զինվորական պաշտոնական վավերագրերից մեկում նշվում է, որ լեռներում ապրող հայ քրիստոնյաների կողմից ռուսական զորքերին ցուցաբերված ծառայության համար անհրաժեշտ է նրանց դուրս բերել մահմեդական ցեղերի միջից և վերաբնակեցնել Հյուսիսային Կովկասի հարթավայրային շրջաններում[25]։ Չերքեզահայերը ռուսներին օգնում էին ոչ միայն տնտեսական գործարքներում, այլև տեղեկություններ էին հաղորդում չերքեզների տեղադրության, զինական ուժի մասին, զենք ու փոխադրական միջոցներ տրամադրում և այլն։ Հայերի դեմ սկսված կրոնական հալածանքների և բռնությունների ժամանակաշրջանում, երբ կային նաև արտաքին նպաստավոր պայմաններ, չերքեզահայերի գաղթը դեպի ռուսական սահմանները ավելի իրական հիմքերի վրա է դրվում։ Կովկասի ռուսական իշխանությունները հետամուտ էին այդ խնդրի իրականացմանը՝ հետապնդելով որոշակի քաղաքական և տնտեսական նպատակներ։ Ամենից առաջ հայաբնակ ավանի հիմնումը և նրա բնակիչներին որոշակի արտոնությունների շնորհումը վարակիչ ազդեցություն կունենար դեռևս լեռներում բնակվող ոչ միայն հայ, այլև հույն, հրեա և նույնիսկ չերքեզ բնակչության համար։

Կովկասյան մարզում հայաքաղաք հիմնելու և հայերի թիվը ավելացնելու խնդիրն առաջ էր եկել դեռևս XVIII դ. 80-ական թվականների սկզբներին, երբ Պ. Պոտյոմկինը նշանակվում է կովկասյան կորպուսի հրամանատար[26]։ Վերջինս անգամ բնակատեղի է նախատեսում հայերի համար[27]։

Հայերին հովանավորելու և նոր գրավված շրջաններում բնակեցնելու հարցը ռուսական կառավարող շրջանների ուշադրության կենտրոնում է եղել XIX դ. ամբողջ առաջին կեսի ընթացքում։ Այդ մասին Կովկասյան մարզի պետի 1840 թ. դեկտեմբերի 21-ի զեկուցագրում նշվում էր, որ անհրաժեշտ է շուտափույթ ձեռք բերել կայսերական թույլտվություն՝ ռուսական սահմաններում հաստատված հայերին զինապարհակից ազատելու վերաբերյալ, քանի որ հայերը, որոնք դժկամությամբ են նայում այդ հարցին, կարող են լեռներում բնակվող իրենց հավատակիցներին ներշնչել, որ նրանք ևս ռուսական սահմանները տեղափոխվելով կենթարկվեն զինապարտության և, հետևաբար, վերջիններս կմնան լեռներում[28]։ «Մարզում ստեղծված... հանգամանքների պատճառով,—գրում է Կովկասյան մարզի պետը,—հատուկ միջոցներ են

---

24 Վ. Միքայելյան, Ն. Աշտարակեցու և Լ. Սերեբրյակովի նամակագրությունը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1973, № 10, էջ 107—108)։

25 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վ. 160։

26 В. Потто, Кавказская война..., т. I, вып. I, СПб., 1887, стр. 125—132.

27 П. Г. Бутков, նշվ. աշխ., էջ 169։

28 ЦГИА СССР, ф. 1286, оп. 7, д. 678, л. 53 об.

ձեռնարկվում այս ժողովուրդների հետ խաղաղասիրական հարաբերությունների հաստատման համար։ Կառավարության մշակած այդ ձեռնարկումներին և վերջնական նպատակին հաջողությամբ հասնելու համար մեծապես գործակցում են... կովկասյան մարզի հայերը»[29]։

Անդրկուբանյան հայերի նկատմամբ կառավարության հովանավորող քաղաքականությունն ուներ այլ նպատակ։ Չերքեզիային լավագիտակ և ռազմական գործին հմուտ չերքեզահայերն օգնում էին լեռներում ռուսական առանձին ջոկատների առաջխաղացմանը, հետախուզական աշխատանք կատարում, մեծապես նպաստելով ռուսական զենքի հաղթանակին։ Բացի այդ, Կուբանի բարեբեր սահմաններում գործունյա և աշխատասեր հայ բնակչության հաստատումը կարող էր նպաստել ոչ միայն մարզի, այլև հարևան շրջանների տնտեսության զարգացմանը։ Գեներալ Գոլովինի մի զեկուցագրում ասվում է, որ «...նախատեսված վայրում հայերն ընդարձակ միջոցներ կգտնեն երկրագործությամբ և անասնապահությամբ զբաղվելու համար, առևտրի ու արդյունագործության մեջ ունեցած նախաձեռնության շնորհիվ նրանք շուտով կարող են ամրապնդել իրենց բարեկեցությունը, անգամ նպաստելով անդրկուբանցիների շրջանում արդյունագործության տարածման գործին»[30]։ Մեկ ուրիշ պաշտոնական զեկուցագրում, նկատի ունենալով չերքեզահայերի բնակեցումը Կուբանի մարզում, նշվում է, որ առևտրական և արդյունագործ ազգաբնակչություն ունեցող քաղաքների հաստատումը անհրաժեշտ է մարզի զարգացման և ծաղկման համար[31]։

Մինչև XIX դ. 30-ական թվականները չերքեզահայերի գաղթը և Ռուսաստանի գրված շրջաններում նրանց վերաբնակեցումն անկազմակերպ ու տարերային բնույթ է կրել։ Գաղթել են առանձին ընտանիքներով, երբեմն հույների և արդեն ռուսական հպատակություն ընդունած չերքեզական ցեղերի հետ միասին։ Չերքեզահայերը երկու անգամ՝ 1791 թ. և 1825 թ. ցանկություն են հայտնել տեղափոխվելու Նոր Նախիջևան[32], սակայն ինչ-ինչ պատճառներով դա չի իրականացել։ XVIII դ. 80-ական թվականների կեսերին չերքեզահայերին Նոր Նախիջևան տեղափոխելու ևս մեկ փորձ է վերագրում Խ. Փորքշեյանը։ Նա գրում է. «Գրիգորի Պոտյոմկինի համաձայնությունը ստանալով, արքեպիսկոպոսը (Հովսեփ Արղությանը—Լ. Պ.) սկսում է գաղտնի բանակցություններ վարել չերքեզահայ ղեկավարների հետ։ Նրանց ներկայացուցիչները հրավիրվում են Նախիջևան, ուր նրանց սրտաբուխ են դիմավորում ...քաղաքն այնքան է դուր գալիս նրանց, որ նրանք քննարկման դրեցին Նախիջևանում չերքեզահայերի վերաբնակեցման հարցը։ Սակայն դա նախիջևանցիները չցանկացան»[33]։ Խ. Փորքշեյանը մատնանշում է մի փաստաթուղթ, որը, սակայն, վերաբերում է ոչ թե XVIII դ. 80-ական թվականներին, այլ 1859—1860 թթ., երբ չերքեզ ցեղերի մեջ ապրող 200 հայեր և հույներ թույլտվություն են խնդրում տեղափոխվել Նոր Նախիջևան, բայց վերջինիս մագիստրատը մերժում է այդ խնդրանքը, պատճառաբանելով, որ դա

---

29 Նույն տեղում, թ. 53։

30 АКАК, М 385, стр. 445.

31 Центральный государственный исторический архив Груз. ССР (в дальнейшем ЦГИА Груз. ССР), ф. 7, оп. 1, д. 479, л. 5.

32 П. Г. Бутков, նշվ. աշխ., էջ 169, Ե. Շահազիզ, նշվ. աշխ., էջ 119։

33 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 5, էջ 68։

կարող է բացասաբար անդրադառնալ մի շարք արտոնություններից օգտվող ընիկ նախիջևանցիների համար[34]։

XIX դ. 30-ական թվականներից Կովկասի զինվորական կառավարչությունը ձեռնամուխ է լինում չերքեզահայերին ռուսական սահմաններում վերաբնակեցնելու գործին։ Գաղթի կազմակերպիչ է նշանակվում Կուբանի զորքերի ստ թեի հրամանատար գեներալ-մայոր Գ. Զասսը։ Սկզբում գաղթում են հաթուկաևցիների մեջ ապրող հայերը և առանձին բնակավայր հիմնում Կուբան գետից հարավ՝ Կազանսկայա ստանիցայի դիմաց, Ռշկոնդուշկա (Ռշկունդիպս) կոչված վայրում[35]։ Այս գաղթը տեղի է ունեցել 1830 թ.[36]։ Որպեսզի հայերն ընդմիշտ ապահով լինեն չերքեզների հարձակումներից, Գ. Զասսը 1839 թ. հայերին (անշուշտ վերջիններիս խնդրանքով) Կազանսկայա ստանիցայից փոխադրում և բնակեցնում է այժմյան Արմավիրի տեղում[37]։

Հաջորդը գաղթում են գյաուրհաբլցիները, որոնք 1836 թ. տեղափոխվում են Կուբանի ռուսական սահմանը և միայն 3 տարի հետո վերջնականապես հաստատվում Արմավիրում։ Ի վերջո, գաղթածների այս երկու խմբերին են միանում նաև եգերուհաևցիների և հակուհաբլցիների մեջ ապրող հայերը։

1839 թ. գարնանը, Կուբան գետի ձախ ափին՝ Պրոչնի-օկոպ ամրոցի դիմաց, չերքեզահայերին հատկացված տեղամասում, վերը հիշատակված չորս խմբերն առանձին-առանձին հիմնում են իրենց թաղամասերը՝ Գյաուրհաբլը, Հաթուկայը, Եգերուհայը և Հակուբհաբլը, որոնց անունները ավանդական են և պաշտոնական գրությունների մեջ ոչ գործածական[38]։ Նորահաստատ հայ բնակավայրի մասին Գ. Զասսը Աստրախանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Սերովբե արքեպիսկոպոսին գրում է, որ կարողացել է լեռնային շրջաններից Կուբանում վերաբնակեցնել 300 հայ ընտանիքներ, որոնք այժմ բնակվում են Կուբանի ձախ ափին՝ Պրոչնի-օկոպ ամրոցի դիմաց և ռազմական ու քաղաքացիական տեսակետից ապահովված են ամեն ինչով[39]։ Ըստ երևույթին, տեղի ընտրությունը կատարվել էր չերքեզահայ պատվավոր ծերունիների և Գ. Զասսի համատեղ որոշմամբ։ Այն հաջող էր ընտրված ոչ միայն պաշտպանական, այլև երկրագործության, անասնապահության և առևտրի զարգացման տեսակետից։

Նորաստեղծ ավանը հիմնադրող չերքեզահայերի թիվը մեծ չի եղել։ Արմավիրը սկզբնական շրջանում ունեցել է ոչ ավելի քան 1900-2000 բնակիչ՝ բացառապես հայեր, նրանց պատկանող չերքեզ ճորտ գյուղացիներ և մի քանի մահմեդականներ։ Հետագայում բնակչությունն աճում է ինչպես բնական աճի, այնպես էլ ներհոսքի հետևանքով։ XIX դ. 50—60-ական թվականներին ռուս դրսեկ բնակչության թիվն Արմավիրում շատ աննշան է եղել։ 1859 թ. տվյալներով Արմավիրում ապրում էր ընդամենը 16 ռուս[40]։ Հարկ է նշել, որ արդեն 1921 թ. Արմավիրի բնակչությունն ըստ ազգությունների հետևյալ

34 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, ց. 1, գ. 1616, թ. 3, 6։
35 Ե. Շահազիզ, նշվ. աշխ., էջ 120։
36 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 52, ց. 44, թ. 8։
37 Նույն տեղում, ֆ. 57, ց. 1, գ. 337, թ. 8։
38 «Արարատ», 1915, էջ 205։
39 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 101ա, վ. 76։
40 ГАКК. ф. 774, оп. 1, д. 216, л. 58.

պատկերն ուներ. ռուսներ՝ 32.983, հայեր՝ 7.880 (որից 5.200-ը բնիկ չերքեզահայեր), այլ ազգություններ՝ 3.637 հոգի[41]։

Արմավիրի հիմնադրումը բնավ ռազմական նպատակ չի հետապնդել, ոչ էլ դրսեկ բնակչության աճի հետևանք է եղել։ Հարց է ծագում, կարելի՞ է, արդյոք, Արմավիրը հիմնադրող անդրկուբանյան հայերին նույնացնել լեռնցի չերքեզների հետ կամ հնարավո՞ր է նրանց համարել դրսեկներ։ Ս. Չեկմենովը հայերին նույնացնելով դրսեկ բնակչության հետ, ավելացնում է, որ XIX դ. 30-ական թվականներից սկսած դրսեկների թիվը սկսում է աճել և նրանց ջանքերի շնորհիվ էլ 1837 թ. հիմնադրվում է Արմավիրը[42]։ Չերքեզահայերը, որոնք 1839 թ. հիմնադրել են Արմավիրը, եղել են ոչ թե դրսեկներ, ինչպես կարծում է Ս. Չեկմենովը, այլ տեղաբնիկ չերքեզ բնակչության հայ քրիստոնյա հատվածը, որոնց չպետք է նույնացնել ոչ միայն Ռուսաստանի տարբեր շրջաններից, այլև Անդրկովկասից գաղթած բնակչության հետ։ Այս սխալի հեղինակը Ս. Չեկմենովը չէ, այլ 1900 թ. լույս տեսած «Историческая справка об иногородних в Кубанской области» հոդվածի հեղինակը[43], որին և հավատ է ընծայել Ս. Չեկմենովը։ Ժամանակին անգամ հարցն այդ ձևով չի դրվել։ XIX դ. 60-ական թվականներին, երբ Ռրուպի շրջանի բնակավայրերին հողեր հատկացնելու վերաբերյալ նախագիծ է մշակվել, Արմավիրը ժամանակավորապես դուրս է մնացել նախագծից այն պատճառով, որ հայերը, որպես քրիստոնյաներ, չեն դասվել լեռնցիների շարքը և որպես Կովկասում վաղուց բնակություն հաստատածներ, չեն նույնացվել նաև դրսեկ՝ ռուս գյուղացիության հետ[44]։ Ի վերջո, Արմավիրի հիմնադրումը դրսեկ բնակչության աճի հետևանք չէր, այլ քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման նոր պայմաններում հայ հատվածի սեփական նախաձեռնության և ցարական կառավարության անմիջական աջակցության արդյունք։

Արմավիրի կառուցմանն ու բարեկարգմանը մեծ օգնություն է ցույց տվել տեղի զինվորական կառավարչությունը։ 1842 թ. օգոստոսի 15-ին ցարը Կովկասի զինվորական գլխավոր հրամանատարությանը հրամայում է այրված փայտաշեն եկեղեցու փոխարեն «Հայկական աուլում» կառուցել քարաշեն եկեղեցի և որպես նպաստ տրամադրել 218.532 ռ. 41 կ.[45]։ Նույն հրամանով նախատեսվում էր «Հայկական աուլում» արդյունագործության զարգացման նպատակով ամեն տարի կազմակերպել տոնավաճառներ[46]։ 1845 թ. ավարտվում է Կուբանի երկու ափերը միացնող փայտաշեն կամրջի կառուցումը, որի ծախսը հոգացել էր նոր նախիջևանցի Ա. Հալաջյանը[47]։ Այսպիսով, կարճ ժամանակամիջոցում զինվորական կառավարչության աջակցության և հայ բնակչության նախաձեռնության շնորհիվ Արմավիրը աճում և բարեկարգվում է։ Ի տարբերություն այլ բնակավայրերի և, մասնավորապես, Նոր Նա-

---

41 ЦГИА Груз. ССР, ф. 13, оп. 2, д. 470, л. 117 об.

42 С. А. Чекменов, Социально-экономическое развитие Ставрополя и Кубани в конце XVIII в. первой половине XIX в., Пятигорск, 1967, стр. 36—37.

43 «Кубанский сборник», т. VII, Екатеринодар, 1900, стр. 78—79, 81.

44 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վ. 160։

45 ЦГИА СССР, ф. 1268, оп. 1, д. 623, л. 11—12.

46 Նույն տեղում։

47 Այդ մասին մեզ տեղեկություններ է հաղորդել արմավիրցի Ա. Արխանյանը։

խիջևանի հայկական գաղութի՝ Արմավիրը որպես քաղաք միանգամից չձևավորվեց, այլ աճեց և կառուցվեց աստիճանաբար և արդեն XX դ. սկզբներին Հյուսիսային Կովկասի հայաշատ ու բարեկարգ քաղաքներից մեկն էր։

Չերքեզահայերին նվիրված ազգագրական ուսումնասիրությունների բացակայության, Արմավիրի հիմնադրման, անվանակոչության և ընդհանրապես պատմության վերաբերյալ եղած վավերագրերի ցրված և անհայտ լինելու հետևանքով որոշ ուսումնասիրողներ կասկածի տակ են առել չերքեզահայերի և Արմավիրի պատմության հետ առնչվող մի շարք հարցեր։ Այսպես՝ Պ. Կրոտովն, անդրադառնալով արմավիրցիներին և Արմավիրի անվանակոչությանը, գրում է. «Մարդաբանական առումով արմավիրահայերը մեծ չափով տարբերվում են անդրկովկասյան հայերից, չնայած արմավիրահայերի մտավորականությունը համառորեն իրենց նախնիներին դուրս է բերում Հայաստանից, վերաբնակեցումը վերագրելով XIII—XIV դդ.։ Արմավիր քաղաքի անվանումը իբր թե ծագել է հայկական թագավորության նախկին մայրաքաղաքի անունից, հիմնադրված... հռչակավոր Հայկի թոռան՝ Արմայիս թագավորի կողմից»[48]։ Պ. Կրոտովն, ըստ երևույթին, հիմք է ընդունել Դ. Սոկոլովի հետևյալ միտքը. «Արմավիր գյուղի բնակիչները ժամանակին ճորտեր են եղել լեռնցիների մոտ, բայց գեներալ Զասսը, գրավելով անդրկուբանյան մարզը, նրանց բնակեցրել է այժմյան գյուղի տեղը և նրան տվել Հայաստանի նախկին մայրաքաղաքի անունը՝ Արմավիր։ Լեռնցիները հայերին գնում էին Թուրքիայի տարբեր առևտրական շուկաներում։ Ապացույցը, որ նրանց նախնիները լեռնցիների մոտ եղել են ճորտեր, այն է, որ դժվար թե գտնվի մեկը, որը գիտենա հայոց լեզուն, իսկ միմյանց հետ (արմավիրահայերը— Լ. Պ.) խոսում են ռուսերեն կամ էլ չերքեզերեն»[49]։ Սակայն վավերագրերը, մասնավորապես ճորտությունից ազատված լինելը հաստատող հատուկ վկայականները[50], պարզորոշ վկայում են, որ ոչ թե հայերն են չերքեզների ճորտերը եղել, այլ հենց իրենք են (անշուշտ ոչ բոլորը) ունեցել ճորտ գյուղացիներ՝ բացառապես չերքեզներից։ Հայերին պատկանող ճորտերը (յասվերները) անգամ օգտվել են որոշ արտոնություններից՝ աշխատելիս տերը պարտավոր էր հսկել, պահպանել ճորտին և այլն[51]։ 1859 թ. Արմավիր այցելած ցարական պաշտոնյան նույնպես հիշատակում է հայերին պատկանող ճորտերի մասին, նշելով, որ նրանք բոլորն առանց բացառության մահմեդականներ են[52]։ Ի վերջո, Արմավիրի հայրենագիտական թանգարանի արխիվում պահվող վերոհիշյալ վկայականներում հիշատակվում են միայն չերքեզ ճորտ գյուղացիներ և ոչ մի տեղ չի նշվում թեկուզ մեկ հայի անուն։ Արմավիրահայերի մոտ հայոց լեզվի չիմացությունը Դ. Սոկոլովը համարում է ճորտության նախանշան, կատարելով երկրորդ սխալը։ Արմավիր տեղափոխված չերքեզահայերի գոնե մի մասը, անշուշտ, իմացել է հայերեն։ Այդ են վկայում աշխարհիկ և հոգևոր իշխանություններին չերքեզահայերի ուղղած բազմաթիվ հայերեն խնդրագրերն ու դիմումները։ 1861 թ. պաշտոնական վավերագրերից մե-

---

48 «Бюллетень школьно-краеведческой секции Армавирского краеведческого общества», 1928, № 2—3.

49 «Кубанский сборник», т. II, Екатеринодар, 1904, стр. 59.

50 *Այս փաստաթղթերը պահվում են Արմավիրի հայրենագիտական թանգարանում։*

51 Ф. А. Щербина, История Кубанского казачьего войска, стр. 25.

52 ГАКК, ф. 774, оп. 1, д. 216, л. 47—48.

կում նշվում է, որ չերքեզահայերը, չնայած լեռնցիների շրջանում երկար տարիներ ապրելուն, կարողացել են պահպանել իրենց լեզուն և հավատը[53]։ Այն, որ չերքեզահայերի մեջ եղել են նաև հայերենին լավագիտակ անձնավորություններ, վկայում է Մատենադարանում 7461 համարի տակ պահվող հետաքրքիր ձեռագիր աշխատությունը, գրված 1842 թ.՝ Արմավիրում, չերքեզահայ Վարդան Գևորգովի կողմից։ Թեև Արմավիրում գրչության օջախ չի եղել և ձեռագիրը միակ նմուշն է, բայց, անշուշտ, Վ. Գևորգովը միակը չի եղել։

Արմավիրի հիմնադրման մասին խոսելիս հարկ է անդրադառնալ նաև ավանի անվանակոչությանը։ Ռ. Բեգ-Երզնկյանն այդ առթիվ գրում է. «Բարեբար գեներալն Զասսի, պաշտպանն տեղափոխեալ Չերքեղիա-հայոց, առաջարկեաց տեսուչ քահանային (Պ. Պատկանյանին—Լ. Պ.) վասն տեղոյն հայ նորաբնակչաց մի հայկական յարմար անուանակոչումն տալ։ Պատմագետ տեսուչն ի սկզբան նոր աւանին անուանեաց Հայկաշէն, բայց չէրքէզա-հայք չհամաձայնեցան, որովհետև հայ բառն չէրքէզօրեն նշանակէ շուն, ուստի կոչեցին զանուն նորաբնակ աւանին Արմաւիր, յանուն մայրաքաղաքին Հայոց Հայկազանց»[54]։ Հայկական նորաստեղծ ավանը սկզբնական շրջանում անգամ անուն չի ունեցել և հայերով բնակված լինելու պատճառով կոչվել է «Հայկական աուլ» («Армянский аул»)[55]։ «Հետո միայն,—գրում է Ե. Շահազիզը,—1843 թ. Ստավրոպոլի հայոց եկեղեցու քահանա տ. Պետրոս Պատկանյանի, բանաստեղծ Ռափայել Պատկանյանի հորեղբոր հոգացողությամբ և միջնորդությամբ կոչվել է Նոր Արմավիր՝ հայոց հնագույն մայրաքաղաքի անունով»[56]։ Այն, որ ավանը Արմավիր է կոչվել Պատկանյանի առաջարկությամբ, հաստատվում է նաև այլ տեղեկություններով[57]։

Այս հարցին մանրամասն անդրադարձել է Վ. Գրիգորյանը[58] և ճիշտ եզրակացրել, որ Արմավիրի «կնքահայրը» եղել է Պ. Պատկանյանը և ոչ Գաբրիել Տեր-Պատկանյանը, ինչպես սխալմամբ գտնում են Գ. Նիկողոսյանը[59] և Ռ. Պատկանյանը[60]։ Սակայն Ե. Շահազիզի նշած թվականը (1843) իրականությանը չի համապատասխանում։ Մինչև 1848 թ. պահպանված ոչ մի վավերագրում Արմավիրի անվան մասին հիշատակություն չկա։ Չերքեզահայերի բազմաթիվ խնդրագրերում և դիմումներում, զինվորական կառավարչության բազմապիսի զեկուցագրերում և պաշտոնական գրություններում նշված է «գիւղն հայոց», «Армянский аул» և այլն[61]։

Միայն 1848 թ. Պ. Պատկանյանի թելադրանքով գրված խնդրագրի համաձայն Ներսես Աշտարակեցին Կովկասի փոխարքայից իրավունք է ստանում հայկական աուլը վերակոչել Արմավիր[62]։

Այսպիսով, 1839 թ. Հյուսիսային Կովկասում հաստատված Արմավիրի հայ գաղութը օգտվելով քաղաքական և սոցիալ-տնտեսական նպաստավոր

53 Նույն տեղում, թ. 206։
54 Ռ. Բեգ-Երզնկյան, նշվ. աշխ., էջ 99։
55 Ե. Շահազիզ, նշվ. աշխ., էջ 132—133։
56 Նույն տեղում, էջ 133։
57 «Արարատ», 1851, № 26, էջ 407։
58 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1971, № 1, էջ 65—80։
59 «Նոր-Դար», 1891, № 63։
60 Ռ. Պատկանյան, Երկերի Ժողովածու, հ. 5, Երևան, 1968, էջ 33։
61 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 108, վ. 402։
62 Շահան-Սիմոն, նշվ. աշխ., էջ 70։

պայմաններից, ձեռք է բերում իրավա-վարչական և տնտեսական բնույթի որոշ արտոնություններ։

Կուբանի բարեբեր հողերում հաստատված Արմավիրի հայ գաղութը XIX դ. վերջերին, շնորհիվ աշխարհագրական դիրքի, առևտրի, երկրագործության, անասնապահության, արդյունագործության զարգացման նպաստավոր պայմանների և ձեռներեց ու գործունյա բնակչության, դառնում է մարզի բարգավաճ քաղաքներից մեկը։

ИСТОРИЯ ОСНОВАНИЯ АРМАВИРА

ЛЕВОН ПОГОСЯН

Резюме

Армавирские армяне являются выходцами из Крыма. В XV—XVI вв. они поселились в Черкессии, а в начале XIX в., переселившись в долину реки Кубань, основали г. Армавир (1839).

Основание Армавира имело важное хозяйственное и политическое значение в экономическом освоении края. Исходя из этого, царское правительство всячески поощряло новопоселенцев, сохраняя за ними ряд привилегий: звание узденей, владение крепостными и т. п.

Армавир получил свое название лишь 9 лет спустя после основания—в 1848 г., по предложению Петроса Патканяна. С помощью местного военного начальства и благодаря усердиям армян Армавир начинает быстро расти и развиваться.